# Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն  Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ԹԵՄԱ՝ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՐԵՆՑԻ ՊՈԵՄՆԵՐՈՒՄ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԹԱՄԱՐԱ ԵՂՅԱՆ

ԽՈՒՄԲ՝ ՀԱՀՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԻ  ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԿՈՍՅԱՆ ԼԻԼԻԹ

ԵՂԵԳՆԱՁՈՐ 2 0 22 թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3
ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՐԵՆՑԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ ..... 6
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ ..... 16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 21

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզվի շարահյուսական մակարդակի հիմնական առանցքը պարզ նախադասությունն է՝ իր գլխավոր ու երկրորդական անդամներով և մեկ ստորոգումով: Պարզ նախադասության սխեմայով են կառուցվում բարդ նախադասությունները՝ իրենց բաղադրիչ նախադասություններով՝ երկու կամ ավելի ստորոգումներով:

Նախադասության կարևորագույն շարահյուսական կարգը ստորոգումն է, այսինքն՝ հատկանիշի վերագրումը առարկային (ենթակային): Այս տեսակետի հետևողական պաշտպաններից էր Մ. Աբեղյանը: «Խոսքը (նախադասությունը),- գրում է Մ. Աբեղյանը,- ուրեմն իր ամենապարզ ձևով կազմվում է մի բայից», առանց բայի խոսք չկա, որովհետև մյուս տեսակի բառերը ստորոգում չեն ցույց տալիս...», «ամեն բայ, ընդհակառակն, մենակ կազմում է մի խոսք, որովհետև ցույց է տալիս թե՛ ստորոգում և թե՛ խոսքի համար անհրաժեշտ ենթակայի և ստորոգյալի (առարկայի և հատկանիշի) գաղափարները», «ենթակա ասվում են, ուրեմն, այն լրացումները, որոնք բացահայտով են բայի դեմքը, որոշ կերպով ցույց տալով անող կամ եղող առարկան, որին վերագրվում է բայիմաստը կամ մի հատկանիշ»[1]:

Եղիշե Չարենցի խոսքարվեստը լեզվական անթերի մշակույթի բարձրագույն նմուշ է, որի արժանիքներից մեկը խոսքի արտահայտչականությունն ու հուզականությունն ընդգծող պատկերավորման միջոցներն են: Պատկերավորությունը բանաստեղծի խոսքի ամենաբնորոշ կողմն է, նրա հիմնական առանձնահատկություններից մեկը, որը պայմանավորված է բանաստեղծի գեղարվեստական մտածողության յուրօրինակությամբ: Բանաստեղծի գեղարվեստական մտածողությունը լավագույն ձևով արտահայտվել է ոչ միայն պատկերավորման միջոցների ինքնատիպ դրսևորմամբ, այլև բառապաշարային ու քերականական իրողությունների յուրօրինակ իրացումով, միակազմ նախադասությունների գործածությամբ, ինչով էլ պայմանավորված է մեր թեմայի արդիականությունը:

Մեր ուսումնասիրության նպատակն է լուսաբանել Չարենցի չափածոյի խոսքարվեստում գործածված միակազմ նախադասությունները՝ առանձնացնելով

---

[1] **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 362, 370:

դրանց դերն ու արժեքը նրա խոսքարվեստում: Մեր աշխատանքում վերոհիշյալ նպատակադրումով առաջադրվել են հետևյալ խնդիրները.

Ա. Չարենցի չափածոյում կիրառված միակազմ նախադասությունների ընտրություն և համակարգում,

Բ. Չարենցի խոսքարվեստին բնորոշ միակազմ նախադասությունների ոճական արժեքի բացահայտում:

Մեր ուսումնասիրության տեսական արժեքը փաստական հարուստ նյութի լեզվաոճական քննության հիման վրա Չարենցի խոսքարվեստում կիրառված միակազմ նախադասությունների արժևորումն է: Ուսումնասիրության ընթացքում կատարված մեկնաբանություններն ու պարզաբանումները, դրանցից բխող եզրահանգումները կարևոր են Չարենցի լեզվական մշակույթի առանձնահատկությունների և գրական հայերենի լեզվաքերականական իրողությունների փոխհարաբերությունների հետազոտման առումով:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գ. Ջահուկյանը, ավելի լայն առումներով քննելով ստորոգման հարցը, գրում է. «Նախադասության էական կողմը ստորոգումն է. առանց ստորոգման նախադասությունը լոկ բառակապակցություն է», «նախադասությունը հանդես է գալիս որպես բայական բառակապակցություն + ստորոգման (հաղորդակցման իրադրության) դրսևորման բոլոր միջոցները»[2]:

Ն. Պառնասյանը, ստորոգումը համարելով նախադասության էությունը, նրա հիմնական հատկանիշը, միաժամանակ բացատրում է, թե ինչպես է իրականանում ստորոգումը: Նա ստորգմանն է վերագրում եղանակավորման, ժամանակի, դեմք ու թվի կարգերը՝ գրելով. «Ստորոգումը իրացվում է այս բոլոր կարգերի ամբողջությամբ, որոնք հանդես են գալիս միասնաբար»[3]:

Ենթական և ստորոգյալը, ավելի ճիշտ՝ դրանց կապակցությունը կազմում է նախադասության կառուցվածքային հիմքը: Համենայն դեպս, դա այդպես է երկկազմ

---

2 **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 333-334:

3 **Ն. Պառնասյան**, Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Երևան, 1986, էջ 79:

նախադասության դեպքում: Ինչ վերաբերում է միակազմ նախադասությանը, ապա այն, նախ, անհամեմատ փոքր կշիռ ունի շարահյուսական կառուցվածքի համակարգում և, երկրորդ, կարելի է ասել, որ նրա ընկալումը զգալի չափով կատարվում է երկկազմի հիմքի վրա, նրա հետ զուգորդման հիման վրա: Պատահական չէ, որ նախադասության քերականական կարգերը հիմնականում հանդես են գալիս ենթակայի և ստորոգյալի կապակցության մեջ:

Այսպիսով, կառուցվածքային տեսանկյունից նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ երկկազմ և միակազմ: Երկկազմ նախադասությունները կառուցվում են ենթակա+ստորոգյալ կաղապարով, որոնցից յուրաքանչյուրը կարող է ունենալ իր լրացումները: Հայերենում նախադասությունների մեծ մասը երկկազմ է: Այսպիսի նախադասություններին հակադրվում են միակազմ նախադասությունները, որոնցում կա միայն մեկ գերադաս անդամ՝ արտահայտված որևէ դիմավոր բայով, կամ էլ գոյականով, ածականով, դերբայով և այլն[4]:

Միակազմ նախադասություններն ունեն մեկ կենտրոնական անդամ, որը, ըստ Ռ. Իշխանյանի, ո՛չ ենթակա է, ո՛չ էլ ստորոգյալ: Նշված նախադասությունների ձևավորման հիմնական միջոցը հնչերանգն է: Այլ կերպ ասած՝ միակազմ են այն նախադասությունները, որոնք միակենտրոն են, գլխավոր անդամներից որևէ մեկը բացակայում է. «Միակազմ նախադասություններն այնպիսի կառույցներ են, ուր բառը կամ բառակապակցությունը որոշակի խոսքային իրավիճակում համապատասխան հնչերանգի միջոցով արտահայտում են ավարտուն նախադասության իմաստ և դրանով իսկ դառնում հաղորդակցման միավոր»5,– գրում է Ռ. Իշխանյանը:

Միակազմ նախադասությունների կարևոր առանձնահատկությունը նաև այն է, որ դրանք այնպիսի կուռ ամբողջություն են կազմում, որ այլևս անհնար է որևէ փոփոխություն կատարել, այսինքն՝ ավելացնել կամ ենթակա, կամ ստորոգյալ: Այդպիսի փորձ անելու դեպքում իսկույն խախտվում է նախադասությունների էությունը, կորչում են ժողովրդական լեզվամտածողությունը, պատկերավորությունը, և նախադասությունը զրկվում է իր հիմնական էությունից՝ միակազմ ու շարահյուսական ինքնուրույն ու անկախ միավոր լինելուց և դառնում է երկկազմ նախադասություն:

---

4 **Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003, էջ 59:
5 **Ռ. Իշխանյան**, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978, էջ 341-342:

Միակազմ նախադասություններին անդրադարձել են նաև Գ. Ջահուկյանը6, Ս. Աբրահամյանը7, Վ. Առաքելյանը [8], Ռ. Իշխանյանը8: Նրանք ուսումնասիրել, բնութագրել են այդ նախադասությունների կառուցվածքային, իմաստային առանձնահատկությունները և կիրառական նշանակությունները:

## ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՐԵՆՑԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Լիարժեք հաղորդումը սովորաբար պայմանավորված է նախադասության հիմնական բաղադրիչներով՝ ենթակայով և ստորոգյալով: Սակայն խոսքի շղթայում լիարժեք հաղորդակցում կարող է տեղի ունենալ նաև թերի նախադասությունների միջոցով: Վերջիններիս հիմնական բաղադրիչներից մեկը կամ երկուսն էլ արտահայտության պլանում լրիվ կամ մասամբ բացակայում են, որից, սակայն, նախադասության բովանդակության պլանը չի խաթարվում, քանի որ բացակայող անդամը կամ անդամները տվյալ հաղորդման մեջ ենթադրվում են, և հարկ եղած դեպքում դրանք կարելի է վերականգնել, այն է՝ դրանց բառային-քերականական տեսք տալ:

Թերի նախադասությունների գործածումով խոսքի հեղինակը խուսափում է խոսակցին արդեն իսկ հասկանալի միտքը «ավելորդ» բառերով կամ, ինչպես Գ. Ջահուկյանն է դրանք անվանում, «ձևական» 2 անդամներով ծանրաբեռնելուց9:

*Միրել եմ, սիրել, ատել ու ներել,*
*Ընկել եմ հաճախ, բարձրացել էլի.*
*Եվ բազմապիսի երգեր եմ գրել՝*
*Խոհով , պայքարով ու կրքով լի:*

Թե՛ լիարժեք և թե՛ թերի երկկազմ նախադասություններին հակադրվում են միակազմ նախադասությունները, որոնցով, ճիշտ է, նույնպես տեղի է ունենում հաղորդակցում, սակայն կառուցվածքային և բովանդակային պլանների էական տարբերությամբ: Միակազմ նախադասություններում բացակայում է գլխավոր ան-

---

6 **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 371-379, 394-396:
7 **Ս. Աբրահամյան**, ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 330-354:
8 **Ռ. Իշխանյան**, Արդի հայերենի շարահյուսություն, Երևան, 1986:
9 **Գ. Ջահուկյան,** Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 391:

դամներից որևէ մեկը, և հաղորդակցում տեղի է ունենում համապատասխան հնչերանգի միջոցով: Միակազմ նախադասությունները բաժանվում են երեք խմբի՝ դիմավոր (ընդհանրական դիմավոր և անորոշ դիմավոր) և անդեմ (բայական անդեմ և անվանական անդեմ) նախադասություններ և բառ- նախադասություններ10:

Դիմավոր միակազմ նախադասություններն էլ իրենց հերթին լինում են՝

ա) ձևական դիմավոր նախադասություն,

բ) անորոշ դիմավոր նախադասություն,

գ) ընդհանրական միակազմ դիմավոր նախադասություն:

Միակազմ նախադասություններում բացակայում է գլխավոր անդամներից որևէ մեկը, և հաղորդակցում տեղի է ունենում համապատասխան հնչերանգի միջոցով: Միակազմ նախադասությունները բաժանվում են երեք խմբի՝ դիմավոր միակազմ, անդեմ միակազմ և բառ նախադասություններ:Իշպես՝

*Տոթ է:Լուսացավ: Սուտ է: Մթնեց: Մեկ է: Ճիշտ է: Գիշեր էր: Աշուն է:Ուրախ է:*

*-Այո՛: Իհարկե՛, այո…*

Դիմավոր միակազմ (անենթակա) նախադասությունների գերադաս՝ կենտրոնական անդամը որևէ դիմավոր բայ է[11]: Դրանից ինքնին բխում է, որ նրանք ձևավորվում են բայի որևէ դեմքով: Բայց այդ դեպքում բայի դեմքը չի կարող հակադրվել մյուս դեմքերին և նրանց հետ հարացույցային շարք կազմել:

Ի տարբերություն զեղչված ենթակայով նախադասության, որտեղ ենթական վերականգնելի է, դիմավոր միակազմ նախադասությունները լինում են՝

**ա) ձևական դիմավոր նախադասություններ** կամ **միադիմի միակազմ նախադասություններ,** որոնց գերադաս անդամն արտահայտվում է դիմասահմանափակ բայով կամ դիմային սահմանափակություն չունեցող բայի դիմասահմանափակ կիրառությամբ:

Ձևական դիմավոր նախադասությունների մի մասը ցույց են տալիս տարվա եղանակ, մթնոլորտային երևույթներ, ժամանակ, օդի ջերմություն, տեղումներ և այլն, ինչպես՝

---

10 **Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան և ուրիշներ**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 467 - 492): **Ս. Աբրահամյան,** Հայոց լեզու. Շարահյուսության, Երևան, 2004, էջ 63:

11 **Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան,** Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, էջ 84:

*Նույն երկինքն էր երևի* (1, 428) [12]

*Այստեղ էր. . .* (1, 426)

Ուշագրավ է, որ միադիմի բայերով անենթակա նախադասությունները Ռ. Իշխանյանը դիտարկում է անվանական անդեմ նախադասությունների շարքում. «Իրենց բանաստեղծական դերով անդեմ անվանական նախադասություններին մասամբ նման են նաև այնպիսիք, որոնք քերականորեն դիմավոր են՝ է բայի առկայության պատճառով, բայց որոնցում այդ բայը գոյացնում է ոչ թե սովորական դատողական-նկարագրական նախադասություն, սովորական ստորոգումով, այլ սոսկ հաստատում է առարկան, երևույթը, նաև տրամադրությունը, ինչպես՝ «Հեռո՛ւ էր...հեռո՛ւ» և այլն»[13]:

Միադիմի (անենթակա) նախադասությունները սոսկ ինչ-որ բան են հաղորդում, նույնիսկ հայտնի չէ, թե ով (կամ ովքեր) է կատարում գործողությունը: Դիտարկենք օրինակներ.

Իմ սրտում արևն է Իրանի (1, 421)

բ) Ընդհանրական անորոշ միակազմ նախադասություններ, որտեղ ստորոգյալն արտահայտված է խոնարհված բայով, ունի դեմք, թիվ, եղանակ, ժամանակ, բայց չունի կոնկրետ ենթակա: Այդ ընհանրականության հանգամանքով է պատճառաբանված այն փաստը, որ այս կարգի նախադասությունները մեծ մասամբ լինում են խորհուրդներ, խրատներ, առաջարկություններ, առածներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր ու դարձվածային միավորներ: Այս խմբին են պատկանում նաև «մարդ» գերադաս բառով կազմված նախադասությունները, որտեղ հիշյալ բառը զուտ ձևական, անորոշ իմաստ ունի14:

գ) Անորոշ դիմավոր են կոչվում այն միակազմ նախադասությունները, որոնցում կատարվող գործողությունը ենթադրաբար կարելի է վերագրել բոլորին:

*Այսպես էր. . .* (1, 400)

«... Որևէ գրողի ստեղծագործության շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությունը ընդհանուր առմամբ պետք է բացահայտի շարահյուսական

---

12 **Ե. Չարենց,** Երկեր չորս հատորով, հ. 1, Երևան, 1986: Նշված աղբյուրից մեջբերված օրինակներից հետո նշվում են համապատասխան հատորն ու էջը:

13 **Ռ. Իշխանյան**, Արևելահայ բանաստեղծության պատմություն, էջ 344:

[14] **Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան և ուրիշներ**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 467 – 492, **Ս. Աբրահամյան**, Հայոց լեզու. Շարահյուսության, Երևան, 2004, էջ 63:

հոմանիշների ընտրության, նրանց կապակցության եղանակների ու դրսևորման միջոցների, նախադասության՝ որպես խոսքի ավարտուն միավորի, արժեքն ու կառուցման հիմնական եղանակները՝ դրանցով ևս պարզաբանելով տվյալ գրողի ոճի էական ու անհատական հատկանիշները»[15],- գրում է Լ. Եզեկյանը:

Եզակի երրորդ դեմքով արտահայտված անենթակա նախադասությունները արտահայտում են քնարական հերոսի խոհերն ու ապրումները, ստեղծում են խոսքային համապատասխան միջավայր ու իրավիճակ: Վերոհիշյալ անենթակա նախադասությունները մեծապես նպաստում են բանաստեղծական խոսքի ուժգնությանն ու քնարականությանը:

Եզակի երրորդ դեմքով արտահայտված անենթակա նախադասությունների անվանաբայական ստորոգյալները ցույց են տալիս.

ա/ Բնության երևույթների, եղանակների, ժամանակի հետ կապված վիճակներ, ինչպես՝

***<u>Առավոտ էր</u>*** *(1, 333)*

***<u>Լուռ էր:</u>***

***<u>Սովոր էին:</u>***

***<u>Հրդեհ էր:</u>***

Այսպիսի անենթակա նախադասությունների ընդգրկման և կիրառման ոլորտները բավականին ընդարձակ են:

բ/ Անենթակա նախադասությունների ստորոգյալները կարող են ցույց տալ հասարակական իրավիճակներ և մարդու անձնական կյանքի հետ կապված իրավիճակներ:

Համեմատելով բայական և անվանաբայական ստորոգյալներով արտահայտված նախադասությունները՝ կարելի է եզրակացնել, որ առաջինները ցույց են տալիս փոփոխվող, իսկ երկրորդները՝ անփոփոխ իրավիճակ, ինչպես՝ մթնել է/մութ է, ցրտել է/ցուրտ է և այլն:

Ըստ Ն. Պառնասյանի՝ հայերենում անենթակա նախադասությունների զգալի մասին զուգահեռ կան համապատասխան նշանակություն ունեցող ենթակայով նախադասություններ, որոնք, սակայն, իմաստային նուրբ տարբերություններ ունեն

---

15 **Լ. Եզեկյան**, Ոճագիտություն, Երևան, 2003, էջ 306:

առաջիններից[16], օրինակ՝ ցրտեց /ցուրտն ընկավ, մթնեց /մութն ընկաց, ամպեց /երկինքն ամպեց և այլն:

Միակազմ նախադասությունները բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին, որտեղից էլ թափանցում են նաև գրական լեզվի ոլորտ՝ գործածվելով գեղարվեստական ստեղծագործությունների մեջ: Միակազմ նախադասությունների ոճական երանգավորումը բազմաբնույթ է հատկապես առօրյա-խոսակցական և գեղարվեստական ոճերում: Միակազմ նախադասություններն այնպիսի կառույցներ են, ուր բառը կամ բառակապակցությունը որոշակի խոսքային իրավիճակում համապատասխան հնչերանգի միջոցով արտահայտում են ավարտուն նախադասության իմաստ և դրանով իսկ դառնում հաղորդակցման միջոց:

Դիմավոր միակազմ նախադասություններն աչքի են ընկնում ոճական ինքնատիպ արժեքով: Այս նախադասությունների ոճական արժեքն այն է, որ բանաստեղծը դրանցով արտահայտում է քնարական հերոսի հոգեկան աշխարհը, ապրումները:

Չարենցի խոսքարվեստում հատկապես մեծ թիվ են կազմում ձևական դիմավոր այն նախադասությունները, որոնք մատնանշում են բնության երևույթներ, վիճակներ, որոնք արտացոլում են մարդու հոգեկան վիճակը:

Շատ ստեղծագործություններում նույնիսկ լեզվական այդ միավորներով են պայմանավորված չափածոյի համար այդքան հատկանշական երաժշտականությունը, խոսքի գեղեցկությունն ու ներդաշնակությունը:

## ԱՆԴԵՄ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եթե նախադասությունը բնորոշում ենք որպես բառերով արտահայտված մտքի նվազագույն և ամփոփ միավոր, ապա հայերենում, դիմավոր բայերով ձևավորված նախադասություններից բացի, գոյություն ունեն նաև այնպիսի նախադասություններ, որոնք իրենց կազմում չունեն դիմավոր բայ, բայց և այնպես հանդես են գալիս որպես մտքի արտահայտիչներ և հաղորդում են պարունակում: Այդպիսի նախադասությունները կոչվում են անդեմ: Անդեմ նախադասությունները չունեն ենթակա և ստորոգյալ որպես այդպիսիք: Դրանք սովորաբար ձևավորվում են մի

[16] **Ն. Պառնասյան**, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970, էջ 43-67:

անորոշ դերբայի միջոցով, որը կարող է ունենալ իր լրացումները, և մի գոյականի ուղղական հոլովաձևի միջոցով, որը ևս կարող է ունենալ իր լրացումները: Անդեմ նախադասությունների այն բառը, որի շուրջ ձևավորվում և հյուսվում է ամբողջ նախադասությունը, կոչվում է անդեմ նախադասության գերադաս անդամ կամ գերադաս բառ: «Անորոշ դերբայներով ձևավորված անդեմ նախադասությունները կոչվում են բայական, իսկ գոյականներով կամ նրանց հավասարազոր անդամներով ձևավորված անդեմ նախադասությունները կոչվում են անվանական»[17]:

Անդեմ նախադասությունները հանդես են գալիս որպես հաղորդում պարունակող միավորներ և միտք են արտահայտում՝ այդպես հավասարազոր դառնալով դիմավոր բայով ձևավորված նախադասություններին: Անդեմ նախադասությունները դիմավոր նախադասություններից սկզբունքորեն տարբերվում են նրանով, որ չունեն նյութականորեն-ձևաբանորեն արտահայտված ստորոգում: Անդեմ միակազմ նախադասությունները զուրկ են դիմավոր բայերից, այստեղ չկա ստորոգում, նախադասության ձևավորման հիմնական միջոցը հնչերանգային ավարտվածությունն է որոշակի խոսքային միջավայրում: Այս խմբի նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ բայական և անվանական:

*Գիշեր: Ցերեկ: Կեսօր:*

*Տասնմեկ… տասներկու…տասերեք…*

*Ամերևո՛ւյթ, կապուտաչյա սիրուհի:*

Անվանական անդեմ նախադասությունների գերադաս անդամն արտահայտված է որևէ անունով՝ հիմնականում գոյականով կամ գոյականական բառակապակցությամբ: Այս նախադասությունները չունեն ենթակա և ստորոգյալ, նախադասություն են այնքանով, որքանով միտք են արտահայտում հնչերանգի միջոցով: Հայ քերականագիտության մեջ միաժամանակ նշվում է, որ անվանական անդեմ նախադասությունները յուրատեսակ ստորոգելիներ են՝ հանգույցի ոչ բառային արտահայտությամբ:

*Փաշա: Տերտեր: Խանութպան:*

*Պատերազմ: Պա՜-տե՜-րա՜զմ:*

*Կայարան:Զորքեր:Զորքեր:*

*Զինվորներ կարմիր: Գիշեր:*

---

[17] **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու: Շարահյուսություն, Երևան, 1987, էջ 185:

Այսպես, Գ. Ջահուկյանը, բացատրելով անվանական անդեմ նախադասությունների բնույթը, գրում է. «Ընդհանրապես միակազմ անվանական նախադասությունների հիմքում ընկած է առարկայի և նրա անվանման հարաբերությունը. առարկան հանդես գալիս որպես անմիջականորեն տրված իրական ենթակա, անվանումը՝ ստորոգելի. շնորհիվ հարաբերության անմիջականության՝ ստորոգումը բառա-մասնիկային հատուկ արտահայտություն չի ստանում»18:

*Բանակը : Երկաթի գրգիռ:*

*Գիշեր, ցերեկ , կեսօր:*

*Խաղաղ- խաղաղ քաղաք:*

*Խոր խավար:Ահավոր սպասում:*

Ինչպես նկատել է պրոֆ. Հ. Հարությունյանը, անվանական նախադասություն-ների գործածության ոլորտը համեմատաբար նեղ է՝ խոսակցական լեզու, գեղարվես-տական գրականություն, երբեմն էլ հրապարակախոսական և գիտական ոճեր, երբ հեղինակը ցանկանում է ասածին հուզական երանգ հաղորդել[19]:

Ամեն մի գոյական, ավարտի հնչերանգով արտասանվելով, ցույց է տալիս առարկայի, երևույթի գոյությունը, լինելիությունը.

Երևան: Աստաֆյան փողոց:

Ամառվա փոշի (1, 392)

Կամ՝

Առավոտ, կեսօր, իրիկուն (1, 393)

Անվանական նախադասությունների մի զգալի մասը զգացական-հուզական երանգավորում ունի, և այդ պատճառով դրանք հեշտությամբ վերածվում են բացականչական նախադասությունների, որոնք արտահայտում են առարկայի, երևույթի հուզական ընկալում, ինչպես օրինակ այս բանաստեղծական հատվածում.

*Քնաթաթախ:*

*Աստաֆյան փողոց:*

*Աչքերին փոշի... (1, 392)*

---

[18] **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, էջ 405-406:

19 **Հ. Հարությունյան**, Անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1970, էջ 57:

*Ամառվա կեսօր։Արևը կարմիր շաֆրան։*

*Թափ։ Թվանք , Թվանքի պատրոն ։Թվանքի ձեթ։*

*Էրզրում … Կարս…Բաթում….*

*Նեմեց … Թուրք…*

*Մենշեվիկ։ Դաշնակ ։Մուսավաթ։*

*Կամավոր։ Հայկական բանակ։*

*Հրացան ։Թնդանոթ։Ռումբեր։*

*Զինվորի, աղջկա , հարսի։*

*Կարինե։Մշո՛ւշ— Կարինե…*

*Տասնութ։Թվական կյանքի։*

*Իրիկուն ։Վերադարձ։Առավոտ։*

*Անհատնում վերքեր կարեվեր։*

*Ողջակեզ։Խնդություն։*

*Կարս։Տասնրինը թվին։*

Անվանական նախադասությունների կիրառություններից մեկն էլ այն է, որ նրանցով արտահայտվում են բարեմաղթություններ, կոչեր, օրհնություններ, անեծքներ և այլն։

*Ողջույն բոլորիդ, բոլորիդ*

*Ձեր կամքին երկաթ,*

*Գրանիտ... (1, 430)*

*Շու՛ն ։Գյավու՛ր։*

*Քուռա՛կ, կատարյալ քուռա՛կ։*

*Օգու՛տ։Մեզ օգուտ։*

*Մա՛հ, մա՛հ, մա՛հ*

*Ընդհանուր,հանուր։*

*Մուսայե՛լ։Սարուխա՛ն։Ավի՛ս։*

Այսպիսի նախադասությունների գործածությամբ հեղինակը ստեղծում է տեսողական, առարկայական պատրանք, ինչպես նաև՝ հանդիսավոր, առարկայական, պատկերավոր ոճ։

*Բանվոր,մշակ , գյուղացի։*

*Մոսկովցի, փարիզցի , բեռլինցի:*

*Երևան :Այսինքն- Նաիրի..*

*Տոթ, արև, ամառվա, փոշի-*

*Երևան…*

*Սառ ջուր:Խաղող :Գինի՛:*

*Մարդիկ:Կառքեր:Մարդիկ:*

*Իրան… Շիրազի վարդեր կարմիր:*

Անվանական նախադասությունները մեծ մասամբ հուզական լիցքով հագեցած նախադասություններ են, կապվում են զանազան մտապատկերների հետ, արտահայտվում հատուկ հնչերանգով, միաժամանակ ծառայում են մտքերի արագ հաղորդումների, ժամանակների, պատկերների ու տեսիլների արագ փոփոխումներն արտահայտելու համար և առաջ են բերում ընդհատավոր ոճ, օրինակ՝

*Եվ ահա դրոշներ կարմիր:*

*Հնամյա Մասիսի առաջ... (1, 430)*

*Քսանմեկ:*

*Հատված քսանմեկ: (1, 430)*

*Հաց , ջուր , տուն, ութ ժամվա աշխատանք , տոն օրերին փարա:*

*Էսպե՛ս : Անգլիացին :Մեր հզոր , խելացի , դաշնակ-դրացին:*

*Նամուս ,Օթելլո:Քին…*

*Մեկ, երկու , երեք-*

Խոսքին երաժշտականություն հաղորդելու համար բանաստեղծը ոչ միայն գտնում է նմանահունչ բառեր, այլև միակազմ նախադասության միավորներին տալիս է այնպիսի հնչյունական տեսք, որը լիովին ներդաշնակում է դրանց իմաստներին:

Բայական անդեմ նախադասությունները կառուցվում են հիմնականում անորոշ դերբայով, ուր քերականորեն չի արտահայտվում ոչ միայն գործողություն կատարողը, այլև ժամանակը, եղանակը, ժամանակը, թիվը և դեմքը, որոնցով պայմանավորված են նրանց ոճական արժեքն ու տարաբնույթ կիրառությունները:

Բայական անդեմ նախադասությունների գերադաս անդամ անորոշ դերբայը հանդես է գալիս սոսկ գործողության, ընթացքի նշանակությամբ՝ առանց առարկայական իմաստի: Որպես անկախ գործածված ձև արտասանվելով տարբեր հնչերանգներով՝ անորոշ դերբայը կարող է արտահայտել եղանակային տարբեր իմաստներ: Ըստ Գ. Ջահուկյանի՝ «անորոշական նախադասությունները կարող են ինքնին արտահայտել եղանակային այն բոլոր իմաստները, որ հանդես են գալիս անորոշի և միադեմ եղանակային ձևերի զուգորդմամբ՝ Չծխել =Չի կարելի ծխել:, Դուրս գրել =Հարկավոր է դուրս գրել և այլն»[20]:

Հնչերանգային միջոցներով արտահայտելով եղանակային տարբեր երանգներ՝ անորոշ դերբայով կազմված անդեմ նախադասությունները իրենց մեծագույն մասով հանդես են գալիս որպես հուզական-զգացական նախադասություններ: Ըստ տարբեր հնչերանգների և արտահայտած իմաստների՝ պետք է տարբերել բայական անդեմ նախադասությունների հետևյալ տեսակները:

ա/ Բացականչական հնչերանգ ունեցող ցանկություն արտահայտող նախադասություններ, որոնք սովորաբար արտահայտում են գործողության կատարման իղձ, ցանկություն:

Բայական անդեմ նախադասություններով Չարենցը հաճախ արտահայտում է քնարական հերոսի ցանկություններեհո, ինչպես օրինակ՝

*Հարբե՛լ, հարբե՛լ ու մոռանալ առօրյան*
*Եվ հավատալ, որ հեռվից բախտն է կանչում. . . (1, 290)*

Այսպիսով՝ Չարենցի ստեղծագործությունների լեզուն աչքի է ընկնում միակազմ նախադասությունների տարբեր տեսակների հմուտ և տեղին գործածությամբ: Գրողը դրսևորում է լեզվական վարպետություն և գեղագիտական բարձր ճաշակ: Միակազմ նախադասությունների անթերի կառույցները առանձնահատուկ հմայք են հաղորդում չարենցյան խոսքին: Դրանք մեծ չափով նպաստում են բանաստեղծական խոսքի հնչեղությանը, պատկերավորությանը, սեղմությանը, ժողովրդայնությանը, մեծացնում են խոսքի ներգործող ուժը: Միակազմ

---

[20] **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 406:

նախադասությունների հաճախակի գործածությունը պատահական չէ Չարենցի խոսքում:

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Աշակերտների գիտելիքները, դիրքորոշումները, հմտությունները, դասի արժեքային բաղադրիչները բացահայտելու նպատակով աշակերտներին նախապես մանրամասն բացատրել ենք միակազմ նախադասությունները՝ հանձնարարելով կարդալ և Չարենցի պոեմներից դուրս բերել միակազմ նախադասության տեսակները:

Կիրառել ենք պրոբլեմային, համագործակցային ուսուցման տեխնոլոգիաները, Վենի գծապատկեր, մտագրոհ մեթոդները:

Խթանման փուլում միակազմ նախադասության մասին ունեցած գիտելիքները ստուգելու համար աշակերտներին առաջադրեցինք պրոբլեմային հարցեր.

1. Որո՞նք են միակազմ նախադասությունները:
2. Ո՞րն է միակազմ ու երկկազմ նախադասության տարբերությունը:
3. Որո՞նք են կոչվում անդեմ միակազմ նախադասություններ:
4. Որո՞նք են կոչվում դիմավոր միակազմ նախադասություններ:
5. Ոճական ի՞նչ արժեքով են հատկանշվում միակազմ նախադասությունները:

Իմաստի ընկալման փուլում աշակերտներին տրվել են հանձնարարություններ՝ ըստ խմբերի: Դասարանը բաժանել ենք 4 խմբի: Իրականացվել է համագործակցային աշխատանք: Առաջին խումբը սահմանված ժամանակահատվածում Չարենցի պոեմներից պետք է դուրս բերեր դիմավոր միակազմ նախադասություններ, 2-րդ խումը՝ անվանական անդեմ, իսկ 3-րդ խումբը՝ բայական անդեմ նախադասություններ: 4-րդ խումբը հանդես էր գալիս ունկնդրի դերում՝ ուղղելով դասընկերների օրինակներում տեղ գտած սխալները և անհրաժեշտության դեպքում կազմելով նախադասությունների գծապատկերները: Համագործակցային աշխատանքը մեզ հնարավորություն տվեց ճշգրտելու թեմայի իմացության մակարդակն ու աշակերտների դիրքորոշումը նմանօրինակ աշխատանքներ կատարելիս, ինչպես նաև բացահայտեց ձեռք բերած հմտությունները:

Հաջորդ փուլում կիրառելով վերլուծության մեթոդը՝ վերլուծեցինք բանատողերը՝ բացահայտելով միակազմ նախադասությունների ոճական արժեքը: Ամփոփելով հետազոտությունը՝ նշենք, որ, ըստ դասի տարբեր փուլերի՝ 23 աշակերտների մասնակցությունը հետևյալն է.




Պարզ է դառնում, որ աշակերտները առավել ակտիվ են եղել Իմաստի ընկալման փուլում: Այսինքն՝ Խթանման փուլը կատարել է իր գլխավոր գործառույթը: Եթե Խթանման փուլում աշակերտներից ութը պասիվ է, ապա մյուս փուլերում նշված թիվը նվազում է: Համապատասխան մեթոդների կիրառմամբ մեզ հաջողվեց մեծացնել ակտիվ աշակերտների թիվը՝ հետաքրքրություն ստեղծելով ուսուցանվող թեմայի շրջանակում և համագործակցային առաջադրանքների միջոցով ամրապնդել աշակերտների մասնակցությունը դասին: Նախ ուշադրություն դարձինք աշակերտների արտահայտիչ կարդալու կարողությունների ամրապնդմանը, այնուհետև նրանց ուշադրությունը սևեռեցինք Չարենցի պոեմներում արծարծվող

թեմատիկայի ու գաղափարի վրա, այնուհետև կիրառեցինք այնպիսի մեթոդներ, որոնք նպաստեցին ուսուցանվող թեմայի ու գաղափարների ընկալմանը:

Հանձնարարված առաջադրանքների ու շարադրությունների ստուգումը արձանագրեց հետևյալ արդյունքը: Քսաներեք աշակերտներից ութը ստացավ գերազանց, տասներկուսը՝ լավ, երեքը՝ բավարար գնահատական: Անբավարար արդյունք չարձանագրվեց:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Միակազմ նախադասությունների ուսումնասիրությունը Չարենցի չափածոյում բերում է հետևյալ եզրահանգման:

1. Միակազմ նախադասություններից բանաստեղծի խոսքարվեստում առավել հաճախ հանդիպում են բայական, իսկ վերջիններիս շարքում էլ՝ դիմավոր միակազմ նախադասությունները: Շնորհիվ միակազմ նախադասությունների՝ չարենցյան լեզուն դառնում է բարեհունչ ու երաժշտական, քանի որ փորձ է արվում խուսափելու երկբաղադրիչ նախադասությունների միապաղաղ շղթայից և կիրառելու համառոտ, միևնույն ժամանակ ընթերցողին ավելի հոգեհարազատ հաղորդակցական միավորներ:
2. Միակազմ նախադասության տարբեր տեսակները Չարենցի ստեղծագործություններում տեղ են գտել ոչ միևնույն հաճախականությամբ: Լայնորեն կիրառվում են նաև դիմավոր միակազմ նախադասություններից ձևական դիմավոր նախադասությունները, ինչպես նաև անվանական անդեմ ու բայական նախադասությունները: Դա բացատրվում է նրանով, որ ընտրելով խոսքի այդ կարճառոտ ձևերը՝ բանաստեղծը խուսափել է խոսքի միօրինակությունից: Այդ պարագայում ստորոգումն իրականանում է ոչ թե բառաքերականական միջոցներով, այլ հնչերանգով՝ տալով տարբեր հաղորդակցման միավորներ: Ձևական դիմավոր նախադասություններով ստորոգյալն առավելապես կիրառված է գոյական + օժանդակ բայ բաղադրյալ ստորոգյալով:
3. Անվանական անդեմ նախադասությունները մեծ մասամբ հուզական լիցքով հագեցված նախադասություններ են, կապվում են զանազան մտապատկերների հետ, արտահայտվում հատուկ հնչերանգով, միաժամանակ ծառայում են մտքերի արագ հաղորդումների, ժամանակների, պատկերների ու տեսիլների արագ փոփոխումներն արտահայտելու համար և առաջ են բերում ընդհատավոր ոճ:
4. Չարենցի խոսքարվեստում կիրառված բայական անդեմ նախադասությունները կազմվել են հիմնականում անորոշ դերբայով, ուր

քերականորեն չի արտահայտվում ոչ միայն գործողություն կատարողը, այլև ժամանակը, եղանակը, ժամանակը, թիվը և դեմքը, որոնցով պայմանավորված են նրանց ոճական արժեքն ու տարաբնույթ կիրառությունները: Այս կարգի նախադասություններից կիրառական մեծ հաճախականություն ունեն հատկապես բացականչական հնչերանգ ունեցող կառույցները, որոնք արտահայտում են քանարական հերոսի հոգեվիճակը, ապրումներն ու տրամադրությունը:

Միակազմ նախադասությունները Չարենցի բանաստեղծություններում ոճական նշանակալի արժեք ունեն և կազմում են բանաստեղծի չափածոյի լեզվի շարահյուսական համակարգի կարևոր առանցքը: Դրանցով են հաճախ պայ-մանավորված չարենցյան խոսքի ինքնատիպությունն ու արտահայտչականությունը, ինչպես նաև բանատողերի համաչափ ու ներդաշնակ կառուցվածքը պահպանելու կարևոր գործառույթ են կատարում: Միակազմ նախադասությունների ուսուցման ուղղված հետազոտությունը ցույց տվեց, որ համապատասխան մեթոդների կիրառմամբ հնարավոր է աշակերտներին հաղորդակից դարձնել ուսուցանվող նյութում պարփակված հիմնական գաղափարներին, արժեքներին, համապատասխան առաջադրանքների ու վարժությունների կիրառմամբ ամրապնդել պոեմներում ամփոփված գաղափարները, նրանց մեջ սերմանել մարդկային լավագույն հատկանիշները:

Մենք իրագործեցինք մեր առջև դրված բոլոր խնդիրներն ու նպատակները: Դասի համակարգված փուլերի ընթացքում զարգացրինք աշակերտների հմտությունները: Համագործակցային, խմբային առաջադրանքներով ակտիվություն ու հետաքրքրություն ստեղծեցինք թեմայի նկատմամբ: Պոեմներում ամրապնդված գաղափարը ընկալելի դարձրինք աշակերտներին միակազմ նախադասությունների ուսուցմամբ: Վերջնարդյունքում մենք աշակերտների մոտ ձևավորեցինք

- Նախաձեռնելու , համախմբված աշխատելու հմտություն
- Աշխատասիրության,պատասխանատվության,ուշադրության դրսևորում
- Գեղագիտական ճաշակի դրսևորում
- Ինքնարտահայտվելու կարողունակության դրսևորում
- Գրավոր և բանավոր խոսքի զարգացում
- Ընկալելու, սովորելու, ճանաչելու, զանազանելու հմտություն

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. **Աբրահամյան Ս.**, ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969:
3. **Աբրահամյան Ս.,** Հայոց լեզու. Շարահյուսության, Երևան, 2004:
4. **Աբրահամյան Ս., Պառնասյան Ն. և ուրիշներ**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976:
5. **Առաքելյան Վ.**, Հայերենի շարահյուսություն, հ. 2, Երևան, 1964:
6. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու: Շարահյուսություն, Երևան, 1987:
7. **Գյուլբուդաղյան Ս.**, Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967:
8. **Եզեկյան Լ.**, Ոճագիտություն, Երևան, 2003:
9. **Չարենց Ե.,** Երկեր չորս հատորով, հ. 1, Երևան, 1986:
10. **Իշխանյան Ռ.**, Արդի հայերենի շարահյուսություն, Երևան, 1986:
11. **Հարությունյան Հ.**, Անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:
12. **Պապոյան Ա., Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003:
13. **Պառնասյան Ն.**, Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Երևան, 1986:
14. **Պառնասյան Ն.,** Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:
15. **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքերը, Երևան, 1974: